Ցանկացած համաձայնեցման եղանակ (ՀԵ), որով C_i և C_j սինքրոտիզացիաները կհամաձայնեցվեն, վերջիններիս միջև ավելացնում է որոշակի $t(C_{ij})$ հապաղում (նկ. 9):



Նկ. 9. Սինքրոտիզացիաների համաձայնեցումը


Անհրաժեշտ է մշակել համաձայնեցման եղանակ, որը չի իրագործում համաձայնեցման արձանագրություն և բավարարում է հետևյալ պայմանները՝

$$T_{\text{ընդունող}} \leq t(C_{ij}) \leq 2T_{\text{ընդունող}} - t_h, \quad (7)$$

$$t(C_{ij}) \approx t_{\text{մետ}}, \text{ երբ } \forall \frac{T_{\text{ընդունող}}}{T_{\text{ուղարկող}}} < 1, \quad (8)$$

որտեղ $T_{\text{ընդունող}}$ -ը և $T_{\text{ուղարկող}}$ -ը, համապատասխանաբար, ընդունող և ուղարկող սինքրոտիզացիաների տակտավորող ազդանշանների պարբերություններն են, $t(C_{ij})$ -ն՝ համաձայնեցման եղանակի մուտք-ելք հապաղումը, երբ դրանով անցնող ազդանշանը բնականոն տրամաբանական վիճակում է, իսկ $t_{\text{մետ}}$ -ը՝ այդ նույն հապաղումը, երբ ազդանշանը մետաստաբիլ վիճակում է:

Մետաստաբիլության հայտնաբերմամբ համաձայնեցման եղանակը: Առաջարկվում է համաձայնեցման եղանակ, որը հայտնաբերում է մետաստաբիլության հետևանք հանդիսացող տվյալային կարգի կորուստը և վերականգնում է այն: (7)-ում գրված պայմանն իրականացնելու համար դեպի ընդունող սինքրոտիզացիայի մուտք ազդանշանի անցումը տեղի է ունենում միայն մեկ տրիգերով: Տրիգերի ելքում մետաստաբիլ վիճակի հետևանքով տեղի ունեցած կարգի կորուստը գրանցելու և վերականգնելու նպատակով տրիգերի ելքին ավելացվել է համակցային սխեմա, որի հապաղումը փոքր է մեկ տակտային պարբերությունից: Դրա շնորհիվ, ի տարբերություն համաձայնեցման մյուս միջոցների, մետաստաբիլ և բնականոն վիճակներում առաջարկվող եղանակի մուտք-ելք հապաղումները գործնականորեն նույնն են, ինչով ապահովվում է (8) պայմանը: Անփոփոխ հապաղումը բացառում է բազմակարգ ազդանշանի աղավաղումը, նույնիսկ եթե որոշ կարգեր մետաստաբիլ վիճակում են հայտնվել: Առաջարկվող եղանակի պարզությունն այն է, որ չի իրականացվում համաձայնեցման որևէ արձանագրություն: Մշակված համաձայնեցման եղանակն իրագործվում է հետևյալ կառուցվածքով (նկ. 10):



Նկ. 10. Մետաստաբիլության հայտնաբերմամբ և վերականգնմամբ համաձայնեցման եղանակը

Նկ. 10 – ում q2 տրիգերի նպատակն է հավանական մետաստաբիլ վիճակի էկրանավորումը ԻՄ-ի ընդունող սինքրոտիզացիոն տրիգերի մուտքից: q2-ին միացված ԲԱՑԱՌՈՂ ԿԱՄ տարրը գրանցելու է տրիգերի մուտքի և ելքի միջև տարբերությունը, որը կարող է լինել հետևյալ երկու դեպքերից մեկում.

- Մուտքային ազդանշանը փոփոխվել է, սակայն ընդունող սինքրոազդանշանի ճակատը դեռ տեղի չի ունեցել:

- Մուտքային ազդանշանը փոփոխվել է, ընդունող սինքրոազդանշանի ճակատը արդեն տեղի է ունեցել, սակայն q2 տրիգերի ելքը չի փոխանջատվել: Սա կարող է տեղի ունենալ միայն այն դեպքում, երբ տրիգերի ելքը հայտնվել է մետաստաբիլ վիճակում:

Վերոհիշյալ երկու դեպքերը միմյանցից տարանջատելու համար մշակված միջոցը պարունակում է մակարդակով ղեկավարվող q1 տրիգեր: Վերջինիս մուտքի ու ելքի հավասարության դեպքում կարելի է միարժեքորեն ասել, որ ընդունող սինքրոազդանշանի դրական ճակատը արդեն տեղի է ունեցել: ԵՎ տարրի միջոցով հայտնաբերվում է q2-ի ելքում կարգի կորստի դեպքը, և en ազդանշանը ընդունում է տրամաբանական 1 արժեքը: Կորսված երկուական կարգը վերականգնվում է՝ ղեկավարող սխեմայի d2 ելքին փոխանցելով q2-ին միացված շրջիչի ելքը:

Նկ.10-ում պատկերված համաձայնեցման եղանակի մուտքին հնարավոր են հետևյալ դեպքերը. 1) մուտքային ազդանշանն ունի նույն արժեքը, ինչ նախորդ պարբերության ժամանակ, 2) մուտքային ազդանշանը փոխանջատվում է:

1) Նախորդ և ներկա պարբերությունների ժամանակ ՀԵ-ի մուտքին տրվում է տրամաբանական 0 արժեք: Այդ դեպքում q2 տրիգերի ելքին միացված ԲԱՑԱՌՈՂ ԿԱՄ տարրի ելքը գրո է, իսկ q1 տրիգերի ԲԱՑԱՌՈՂ ԿԱՄ-ՈՉ տարրի ելքը՝ տրամաբանական 1: Այդ դեպքում en ազդանշանն ընդունում է տրամաբանական 0 արժեք,

ինչը նշանակում է, որ կարգի կորուստ տեղի չի ունեցել: $e_n = 0$, հետևաբար՝ $d_2 = q_2$, իսկ d_1-d_2 հապաղումը՝

$$t_{d_1-d_2} = T_{SU} + t_{q_2} + t_{կոմբ} : \quad (9)$$

2) Տեղի է ունեցել փոխանջատում.

ա) q_2 -ի ելքը նորմալ փոխանջատվում է: Այդ դեպքում q_2 -ին միացված ԲԱՑԱՌՈՂ ԿԱՄ տարրի ելքը տրամաբանական զրո է, հետևաբար՝ $e_n = 0$ և $d_2 = q_2$, իսկ d_1-d_2 հապաղումը կրկին որոշվում է (9)-ով,

բ) q_2 -ի ելքը մետաստաբիլ է, և տեղի է ունեցել կարգի կորուստ: Քանի որ q_2 -ը չի փոխանջատվել, ուստի դրան միացված ԲԱՑԱՌՈՂ ԿԱՄ տարրի ելքը տրամաբանական մեկ է: Մակարդակով դեկավարվող տրիգերի ելքը արդեն հավասարվել է մուտքին. ԲԱՑԱՌՈՂ ԿԱՄ-ՈՉ տարրի ելքը տրամաբանական 1 է: $e_n = 1$, հետևաբար՝ $d_2 = !q_2$, իսկ d_1-d_2 հապաղումը՝

$$t_{d_1-d_2} = T_{SU} + t_{կոմբ} : \quad (10)$$

Մետաստաբիլության առաջացման դեպքում ՀԵ-ի հապաղումը փոքր է բնականոն դեպքի հապաղումից q_2 տրիգերի հապաղման չափով, քանի որ ազդանշանը ոչ թե տարածվում է q_2 տրիգերով, այլ ձևավորվում է համակցային տրամաբանության միջոցով:

Վերևում քննարկված դեպքերից ակնհայտ է, որ ի տարբերություն նկ. 5 – 7-ում պատկերված ԱԻՀԵ-ների՝ մշակված ՀԵ-ն ապահովելու է ազդանշանի տարածման ավելի փոքր հապաղում, որը բնականոն և մետաստաբիլ ազդանշանների դեպքերում տարբերվում է ընդամենը տրիգերի հապաղման չափով:

Ի տարբերություն համաձայնեցման այլ եղանակների՝ առաջարկվող ՀԵ-ն չի ձգտում նվազեցնել մետաստաբիլ վիճակի առաջացման հավանականությունը, այլ վերականգնում է մետաստաբիլության առաջացրած կորուստները:

Առաջարկված համաձայնեցման եղանակի արդյունավետության գնահատման նպատակով կատարվել է սխեմայի մոդելավորում 28 նս/տեխնոլոգիական գործընթացի համար՝ օգտագործելով HSPICE ծրագրային միջոցը: Որպես ուղարկող և ստացող սինքրոտիքություններ օգտագործվել են 330 ՄՀց-ից մինչև 2000 ՄՀց հաճախականությամբ աշխատող տրիգերներ, որոնց տակտային ազդանշանների հաճախականությունների հարաբերությունը փոփոխվել է մեկից մինչև 6 արժեքները: Մշակված ՀԵ-ի աշխատանքը ստուգվել է սինքրոտիքությունների միջև կարգերի՝ փոքր հաճախականությամբ սինքրոտիքությունից մեծ հաճախականությամբ սինքրոտիքության փոխանակությամբ՝ ընդունող սինքրոտիքության մուտքում ապահովելով բնականոն և մետաստաբիլ վիճակներ: Մոդելավորման արդյունքներն ընդհանրացված են աղ. 1-ում:

Մոդելավորման արդյունքները

Ուղարկող սինքրոտիբություն (ՄՀԳ)	Ստացող սինքրոտիբություն (ՄՀԳ)	Պարբ. (նվ)	ՀԵ-ի հապաղում (նվ)	ՀԵ-ի հապաղում մետաստաբիության դեպքում (նվ)	%
330	467	2,14	2,24	2,23	0,44
330	568	1,76	1,86	1,84	1
330	735	1,36	1,46	1,45	0,6
330	870	1,15	1,25	1,24	0,8
330	1064	0,94	1,04	1,03	0,9
330	1408	0,71	0,809	0,808	0,12
330	1724	0,58	0,675	0,67	0,74
330	2080	0,48	0,578	0,575	0,52

Ստացված արդյունքները ցույց են տալիս, որ մշակված միջոցի q2 տրիգերի էլքում բնականոն և մետաստաբիլ վիճակներում դրա հապաղումը, ընդունող տարբեր հաճախականությունների դեպքում, առավելագույնը տարբերվում է 1% - ով:

Արդյունքներից երևում է նաև, որ մետաստաբիլ վիճակում ազդանշանի հապաղումը նշված տոկոսով փոքր է, քան բնականոն վիճակում հապաղումը: Դա բացատրվում է նրանով, որ մետաստաբիլությունից վերականգնված ազդանշանը չի անցնում տրիգերի միջով, այլ ձևավորվում է բացառապես համակցային սխեմայի միջոցով:

Առաջարկվող ՀԵ-ն վերոհիշյալ ԱԻՀԵ-ների համեմատ ունի ավելի փոքր մուտք-էլք հապաղում՝ 1 տակտային պարբերության չափով: Երկուական կարգերի յուրաքանչյուր հաջորդ փոխանցումը կարող է տեղի ունենալ նախորդից մեկ տակտային պարբերություն հետո: Այս եղանակի կիրառման դեպքում ընդունող սինքրոազդանշանի հաճախականության և ուղարկող սինքրոազդանշանի հաճախականության հարաբերությունը կարող է լինել կամայական՝ ի տարբերություն հերթի վրա հիմնված ՀԵ-ի, որի դեպքում այդ հարաբերությունը կարող է հավասար լինել առավելագույնը երեքի:

Աղ. 2-ում ընդհանրացված են հիշատակված համաձայնեցման եղանակների հապաղումները, որտեղից երևում է առաջարկվող եղանակի առավելությունը:

Առաջարկվող ՀԵ-ի հապաղումների և հայտնի եղանակների համեմատությունը

Ուղարկող սինքրոտիզմ (ՄՀԳ)	Ստացող սինքրոտիզմ (ՄՀԳ)	Առաջարկվող եղանակ (նվ)	ՄՀ եղանակ (նվ)		Հերթահեն եղանակ (նվ)	
			Մին.	Մաքս.	Մին.	Մաքս.
330	467	2,24	4,28	6,42	6,42	8,56
330	568	1,86	3,52	5,28	5,28	7,04
330	735	1,46	2,72	4,08	4,08	5,44
330	870	1,25	2,3	3,45	3,45	4,6
330	1064	1,04	1,88	2,82	2,82	3,76
330	1408	0,809	1,42	2,13	2,13	2,84
330	1724	0,675	1,16	1,74	1,74	2,32
330	2080	0,578	0,96	1,44	1,44	1,92

Մշակված ՀԵ-ի թերությունն այն է, որ ուղարկող սինքրոտիզմի հաճախականությունը չի կարող լինել ավելի մեծ, քան ընդունողինը: Այս հանգամանքը առաջարկվող համաձայնեցման միջոցի սահմանափակումն է: Նշված սահմանափակման հաշվին, սակայն, առաջարկված ՀԵ-ով ազդանշանի տարածման հապաղումը առնվազն 2, առավելագույնը 4 անգամ փոքր է այլ եղանակների դեպքում հապաղումներից:

Եզրակացություն: Առաջարկվել է տարբեր հաճախականություններով տակտավորվող թվային սխեմաների համաձայնեցման եղանակ, որը համաձայնեցնում է ցածր հաճախականությամբ սինքրոտիզմի բարձրի հետ կամայական հաճախականային հարաբերությունների դեպքում: Այս եղանակի թերությունն այն է, որ այն կիրառելի է, եթե ուղարկող սինքրոտիզմի տակտավորման հաճախականությունը փոքր է ընդունող սինքրոտիզմին: Ապահովելով բնականոն և մետաստաբիլ ազդանշանների հապաղումների առավելագույնը 1% տարբերություն՝ առաջարկված միջոցը կիրառվում է ինչպես միակարգ, այնպես էլ բազմակարգ ազդանշանների համաձայնեցման նպատակով՝ բացառելով ազդանշանի աղավաղումը: Այն, բաղկացած լինելով ընդամենը 9 տարրից, ԻՄ-ում ավելացնում է ավելի քիչ մակերես, քան համաձայնեցման այլ եղանակները, և ցուցաբերում է դրանցից 2.4 անգամ փոքր համաձայնեցման հապաղում: Նվազագույն հապաղումը պայմանավորված է մետաստաբիլության հետևանքով ազդանշանի կորուստը արձանագրելու և համակցային տրամաբանությամբ վերականգնելու հատկությամբ: Առաջարկված ՀԵ-ն որևէ կախում չունի տեխնոլոգիական գործընթացից, և հետևաբար՝ այն սինթեզելի է կամայական տեխնոլոգիական գործընթացի դեպքում:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. **Ginosar R.** Metastability and synchronizers: A tutorial // IEEE Design and Test of Computers. – September, 2011. – Vol. 28, No. 5. – P. 23-35.
2. **Cummings C.E.** Clock domain crossing (CDC) design & verification techniques using SystemVerilog // Synopsys User Group (SNUG).- September 2008. – Boston, USA, 2008.

3. **Hatture S., Dhage S.** Multi-clock domain synchronizers // In Computation of Power, Energy Information and Commuincation (ICCPEIC).- April 2015. – P. 403-408.
4. Quantitative analysis of state-of-the-art synchronizers: clock domain crossing perspective / **N. Sharif, N. Ramzan, F.K. Lodhi, et al** // International Conference Emerging Technologies (ICET).- September, 2011. – P. 1-6.
5. **Chong A.B.** Product Level MTBF Calculation // 5th International Conference on Intelligent Systems, Modelling and Simulation. – January, 2014. – P. 749-754
6. **Al-bayati Z.** Design and Verification of Clock Domain Crossing Interfaces: Doctoral dissertation.- Concordia University Montréal, Québec, Canada. 2012.

Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան, Երևանի պետական համալսարան: Նյութը ներկայացվել է խմբագրություն 20.10.2016:

В.Ш. МЕЛИКЯН, Т.Р. ХАЖАКЯН, Т.А. АХВЕРДЯН, С.А. МАНУКЯН

МЕТОД СИНХРОНИЗАЦИИ ЦИФРОВЫХ СХЕМ С РАЗНЫМИ ТАКТОВЫМИ ЧАСТОТАМИ

Предложен метод синхронизации цифровых схем с разными тактовыми частотами, который обладает возможностью детектирования метастабильности и восстановления нормального значения сигнала в принимающей синхрообласти. В отличие от других методов синхронизации, предложенный метод имеет меньшее запаздывание и использует меньшее количество элементов. За счет того, что синхронизация возможна лишь от синхрообласти с меньшей тактовой частотой к синхрообласти с большей, предложенный метод исключает возникновение метастабильности, не используя протоколы синхронизации.

Ключевые слова: тактовый сигнал, метастабильность, синхрообласть, синхронизация.

V.SH. MELIKYAN, T.R. KHAZHAKYAN, T.A. HAKHVERDYAN, S.H. MANUKYAN

A METHOD OF SYNCHRONIZATION OF DIGITAL CIRCUITS WITH DIFFERENT CLOCK FREQUENCIES

A method of synchronization of digital circuits that have different clock frequencies is proposed. The method has properties of detecting the metastable state of a signal in the receiver domain and recovering its normal state. Compared to other methods of synchronization the proposed one has a less delay and a smaller number of logic elements. Due to being able to implement synchronization only from the clock domain with lower frequency to the one with higher, the proposed method excludes the occurrence of metastability by not implementing synchronization protocols.

Keywords: clock signal, metastability, clock domain, synchronization.

Ս.Խ. ԽՈՒՂԱՎԵՐԴՅԱՆ, Մ.Գ. ԽԱՉԱՏՐՅԱՆ, Տ.Ս. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ,
Ն.Բ. ՄԵՀՐԱԲՅԱՆ

ՍՊԵԿՏՐԱԼՈՒՍԱԶՈՓԱԿԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅԱՄԲ ՄԻԼԻՑԻՈՒՄՍՅԻՆ
ԵՐԿԱՐԳԵԼՔ ԿԱՌՈՒՑՎԱԾՔ

Հետազոտվել են ուղղաձիգ տեղաբաշխված սիլիցիումային երկարգելք $TiSi_2 - n - Si - p - Sz$ կառուցվածքի սպեկտրային ընտրողական զգայնության հնարավորությունները: Հետազոտվող կառուցվածքի հիման վրա պատրաստվել է փորձանմուշ: Մոդելավորվել են դրանում էլեկտրոնային գործընթացները: Լուսային վոլտամպերային բնութագրի թվային տվյալների օգտագործմամբ ստացվել է քսենոնային լամպի ինտենսիվությունների սպեկտրային բաշխվածությունը: Շատ փոքր (մի քանի μm) մթնային հոսանքները հնարավորություն են տալիս իրականացնել փոքր ինտենսիվությամբ էլեկտրամագնիսական ճառագայթների սպեկտրային վերլուծություն:

Առանցքային բառեր. սպեկտրային բաշխվածություն, ճառագայթի ինտենսիվություն, օպտիկական միջավայր, մոդելավորում:

Ներածություն: Վերջին տասնամյակում նկատելի է տարբեր միջավայրերում իրավիճակները հեռավերլուծելու հնարավորություն ընձեռող և դյուրօգտագործելի տվիչների պահանջարկի աճը: Դրանք անհրաժեշտ տեղեկություն են տալիս հետազոտվող միջավայրի բաղադրության մասին և լուծում անվտանգության տեսակետից կարևոր նույնականացման խնդիրներ [1-3]: Այդ նպատակով կատարվում են հետազոտություններ՝ լուսազտիչների, պրիզմայի, դիֆրակցիոն ցանցի, ինչպես նաև բարձր ճշտությամբ մեխանիկական հարմարանքների օգտագործումը [4-6] սպեկտրային վերլուծության սարքերում բացառելու ուղղությամբ:


Բարձր ճշտությամբ սպեկտրային վերլուծություն իրականացնելու գրավիչ ուղղություն է հատուկ մշակված կիսահաղորդչային կառուցվածքների ֆունկցիոնալ հնարավորությունների օգտագործումը:

Հայտնի են աշխատանքներ բազմազան ֆոտոընդունիչների վերաբերյալ [7-15], որոնցում օգտագործվում են բազմաշերտ կառուցվածքներ կամ բազայի տարբեր հաստությամբ ակտիվ շերտերի կասկադաձև շարք: Ճառագայթի առանձին ալիքների ներթափանցման տարբեր խորությունները դրանցում ապահովում են ֆոտոհաղորդականության տարբեր չափեր: Չափման արդյունքի մաթեմատիկական մշակումը տալիս է տեղեկություն ինտենսիվության սպեկտրային բաշխվածության մասին:

Սակայն բարձր ճշտությամբ գրանցելու համար այդ կառուցվածքները պահանջում են կլանման պայմանների նույնականություն և նանոչափային ճշտությամբ բազմաշերտ կառուցվածքների ստեղծման անհրաժեշտություն: Ստացման բարդ տեխնոլոգիան և արտաքին լարմամբ սպեկտրային զգայնության ղեկավարման հնարավորության բացակայությունը դժվարացնում են դրանց պատրաստման և օգտագործման հնարավորությունները: Նման թերությունները վերացնող կիսահաղորդչային սպեկտրային վերլուծության սարքի ստեղծումը դառնում է հրատապ, հատկապես հեռավերլուծությունում, որտեղ պահանջվում է էժան, արագագործ, դաշտային պայմաններում պիտանի, սպեկտրային բարձր զգայնությամբ սարք:

1. Հետազոտվող օբյեկտը: Հետազոտվում է $p^+ - n - p^+$ սիլիցիումային կառուցվածք (նկ. 1), որը կարելի է պատրաստել ինտեգրալ սխեմայի ստացման տեխնոլոգիական ցիկլի ընթացքում:

n - բազան գրավված է հանդիպակաց արգելքների աղքատացած շերտերով (նկ. 1): Ընդհանուր հոսանքն արգելքներում ստեղծված հոսանքների տարբերությունն է: Այդ կառուցվածքի էներգետիկ գոտիական դիագրամում առաջանում է աղքատացած շերտերի հպման x_m կետ: Այդտեղ էլեկտրոնի պոտենցիալ էներգիան ունի նվազագույն արժեք: Այն կախված է արտաքին լարման բևեռականությունից և շարժվում է դեպի լույսի կլանման մակերևույթը, երբ մերձակերկությանին հպակն ուղիղ է շեղված, իսկ թիկունքայինը՝ հակառակը (նկ. 1): Ճառագայթի հիմնական կլանման միջավայրերն աղքատացած շերտերն են: Թիկունքային արգելքի հակառակ շեղման պայմաններում ֆոտոհոսանքը հիմնականում կապմանավորվի դրանով: Ալիքները, կախված իրենց երկարությունից և ինտենսիվությունից, ունեն ներթափանցման տարբեր խորություններ:



Նկ. 1. $p^+ - n - p^+$ կառուցվածքը և հոսանքների ուղղությունները

Դեպի մակերևույթ (դեպի նկ. 1-ի "0"-ն) x_m -ի տեղափոխումը լայնացնում է թիկունքային արգելքի աղքատացած շերտը և ավելացնում նրանում կլանվող ալիքների թիվը: Ձախ մակերևույթի p^+ բարձր հաղորդականությամբ բարակ շերտը և նրա վրա լարման անկումը կարելի է անտեսել: Դա թույլ կտա "0" կետը վերցնել որպես մակերևույթ և չափել ֆոտոհոսանքը, որը կպարունակի տեղեկություն կլանվող ալիքների ինտենսիվության և ալիքի երկարության մասին: Դա կարելի է ստանալ համապատասխան ալգորիթմի միջոցով, որի մշակման համար օգտագործվել են x_m -ը, V լարումը, կլանման α գործակիցը և ալիքի F ինտենսիվությունը միմյանց կապող մաթեմատիկական արտահայտությունը [16]՝

$$\sum_{i,j} I_{Ph} \ i, j = S q \sum_{i,j} F(\lambda_i) \left(1 - 2e^{\alpha_i x_{mj}} + \frac{e^{-\alpha_i d}}{1 + \alpha_i w} \right), \quad (1)$$

որտեղ ($i = 1, 2, 3, \dots$) – ը փոխվում է ինտեգրալ հոսքում ճառագայթի ալիքի երկարությունը փոխելիս, իսկ ($j = 1, 2, 3, \dots$) – ը փոխվում է շեղման լարումը փոխելիս, $F_0(\lambda_i)$ - ն λ_i երկարությամբ ընկնող ալիքի ֆոտոնների լրիվ հոսքն է:

Ընդունելով, որ բազան գրավված է արգելքների աղքատացած շերտերով (նկ. 1), դրանում x_m - ի պոտենցիալի բաշխվածությունը որոշվում է դաշտի V պոտենցիալով և այդ դաշտը ստեղծող տարածական լիցքերի N_d խտությամբ [16]՝


$$x_m = \frac{d}{2} - \frac{\varepsilon_0 \varepsilon (\Delta \varphi_b + qV)}{q^2 N_d d}, \quad (2)$$

որտեղ $\Delta \varphi = \varphi_2 - \varphi_1$, N_d - ն դոնորների խտությունն է, ε - ը՝ նյութի դիէլեկտրիկ թափանցելիությունը, ε_0 - ն՝ վակուումի դիէլեկտրիկ թափանցելիությունը, q - ն՝ էլեկտրոնի լիցքը: Բնչպես երևում է նկ. 2-ից, $x_m(V)$ կախվածությունն ունի գծային տեսք:

Հետազոտվել են պատենավորված ֆոտոդետեկտորի փորձնական նմուշներ, որոնց կառուցվածքի կտրվածքը բերված է նկ. 2- ում: $d = 2$ մկմ հաստությամբ բազան հանդիպակաց կողմերից շրջապատված է սիլիցիդային և $p - n$ անցումային արգելքներով: Կառուցվածքի ելքերը միացված են պատյանի 1, 8, 2 ելքերին, որոնք համապատասխանում են ներդիրի սխեմատիկական պատկերի նույնանուն ելքերին:

Նկ. 2-ում կառուցվածքի ո բազան ֆոսֆորով լեգիրված էպիտաքսիական շերտ է՝ խառնուրդների $N_d = 10^{15}$ սմ⁻³ խտությամբ: p^+ - հարթակը լեգիրված է բորով, ունի խառնուրդների 10^{18} սմ⁻³ խտություն: Խառնուրդները սենյակի ջերմաստիճանում իոնացված են և իրենցով պայմանավորում են համապատասխան տիրույթում հիմնական լիցքակիրների խտությունները՝ n_n - ը և p_p - ն: Միլիցիումի սեփական լից-

քերի խտությունը՝ $n_i = 1,6 \cdot 10^{10} \text{ սմ}^{-3}$ է, ջերմային kT/q էներգիան սենյակի ջերմաստիճանում 0,026 էՎ է, Ti – ի ստեղծած PtSi սիլիցիդային արգելքի բարձրությունը՝ $\phi_{\text{PtSi}} = \phi_{\text{PtSi}} - \phi_{\text{nSi}} = 0,84$ էՎ է, իսկ p-n անցման պոտենցիալ արգելքի բարձրությունը կազմում է $\phi_{p-n} = (kT/q) \ln(p_p \cdot n_n / n_i) = 0,76$ էՎ [17]: Այսպիսով, հանդիպակաց պոտենցիալ արգելքների տարբերությունը $\Delta\phi_k = 0,84 - 0,76 = 0,08$ էՎ է:



Նկ. 2. Ֆոտոդետեկտորային կառուցվածքի կտրվածքը

Ունենալով վերը նշված տվյալները, սիլիցիումի $\varepsilon = 12$ և վակուումի $\varepsilon_0 = 8,86 \cdot 10^{-14} \text{ Ֆ/սմ}$ դիէլեկտրիկական թափանցելիությունները, բազայում խառնուրդի խտությունը և էլեկտրոնի լիցքը, նաև հաշվի առնելով, որ բազայի դիմադրությունը եզրային շերտերի համեմատ շատ մեծ է, կարելի է ընդունել, որ արգելքների տարածական լիցքերը տեղաբաշխված են բազայում, և դրանց լայնությունները կարելի է որոշել հետևյալ կերպ [17]՝

$$d_{\text{PISI}} = \sqrt{\frac{2\varepsilon_0 \varphi_{\kappa}}{q^2 N_d}} = 1,056 \text{ մկմ}, d_{p-n} = \sqrt{\frac{2\varepsilon_0 \varphi_{\kappa}}{q^2 N_d}} = 1 \text{ մկմ}:$$

Կառուցվածքի բազայի լայնությունը $d = 2 \pm 0,2$ մկմ է (նկ. 2), իսկ պոտենցիալ արգելքների գումարային լայնությունը՝ 1,893 մկմ: Հետևաբար՝ բազան համարյա գրավված է հանդիպակաց արգելքներով: Արտաքին լարումը հիմնականում ընկնում է բազայում պոտենցիալ արգելքների վրա, և դրանց հպման x_m կետի դիրքը (նկ. 1) կարելի է դեկավարել արտաքին լարմամբ:

2. Հետազոտման արդյունքները: Աղյուսակում բերված է փորձերի ընթացքում օգտագործված քսենոնային լամպի ճառագայթի սպեկտրային պարամետրերը:

Աղյուսակ

Քսենոնային լամպի ճառագայթի սպեկտրային պարամետրերը

Ալիքի երկարությունը, նմ	Ֆոտոնի էներգիան՝ $h\nu$, էՎ	Հզորություն, մկՎտ	Մակերեսին քվանտների թիվը՝ F_0 , $\text{քվ}/\text{սմ}^2 \cdot \text{վ}$	Կլանման գործակիցը՝ α , սմ^{-1}
300	4,14	11,84	1,787E+13	$1,73 \cdot 10^6$
350	3,54	59,6	1,052E+14	$1,04 \cdot 10^6$
400	3,1	274,4	5,532E+14	$9,52 \cdot 10^4$
450	2,7	382	8,843E+14	$2,55 \cdot 10^4$
500	2,5	391,4	9,785E+14	$1,11 \cdot 10^4$
550	2,26	371	1,026E+15	$6,39 \cdot 10^3$
600	2,06	359,2	1,09E+15	$4,14 \cdot 10^3$
650	1,91	320,3	1,048E+15	$2,81 \cdot 10^3$
700	1,77	245	8,651E+14	$1,90 \cdot 10^3$
750	1,65	216,2	8,189E+14	$1,30 \cdot 10^3$
800	1,55	186,3	7,512E+14	$8,50 \cdot 10^2$
850	1,55	123,9	4,996E+14	$5,35 \cdot 10^2$
900	1,4	847,6	3,784E+15	$3,06 \cdot 10^2$
950	1,3	841,9	4,048E+15	$1,57 \cdot 10^2$
1000	1,24	870,9	4,39E+15	$6,40 \cdot 10^1$

Դրանց չափումներն իրականացվել են օպտիկական հզորության «Thorlabs PM100» մակնիշի չափիչ սարքով: Աստիճանավորման ժամանակ օգտագործվել է S120A մակնիշի ֆոտոդիոդ, որի սպեկտրային միջակայքը 400...1000 նմ է: Դրա պատճառով 400 նմ-ից փոքր 2 արժեքները՝ 300 և 350 նմ-երը, կարելի է ընդունել սխալի

համեմատաբար մեծ չափաբաժնով: Որակական գնահատականներում դա կարելի է ընդունել որպես ոչ կրիտիկական: Սպեկտրային չափման ժամանակ օգտագործվող դիֆրակցիոն ցանցն ապահովել է $\Delta\lambda = 10$ նսպեկտրային ճշտություն:

$p^+ - n - p^+$ սիլիցիումային կառուցվածքի (նկ. 2) ընտրողական սպեկտրային զգայնությունը բացահայտելու համար օգտագործվել է աշխատանք [18] –ում բերված ալգորիթմը: Դրանում կլանման գործակցի, ֆոտոհոսանքի և լուսազգայուն մակերևույթին ընկնող քվանտների ինտենսիվության համապատասխան արտահայտությունները, հետազոտվող կառուցվածքի համար, ստացվել են հետևյալ կերպ: Մակերևույթից մինչև x_m կետ (նկ. 1) կլանվող քվանտներն ապահովում են մակերևութային արգելքի ֆոտոհոսանք: Որոշակի ալիքի, նրա կլանման գործակցի և կիրառվող արտաքին լարման համար այն ունի հետևյալ տեսքը՝

$$I_1 = qSF_{01}(1 - e^{-\alpha_1 x_{m1}}) ,$$

իսկ թիկունքային արգելքի ստեղծած ֆոտոհոսանքը՝

$$I_2 = qSF_{01}(e^{-\alpha_1 x_{m1}} - e^{-\alpha_1 d}) :$$

Մեկ ալիքով պայմանավորված ընդհանուր ֆոտոհոսանքը այդ երկու ֆոտոհոսանքների տարբերությունն է և ունի հետևյալ տեսքը՝

$$I = I_1 - I_2 = qSF_{01}(1 - 2e^{-\alpha_1 x_{m1}} + e^{-\alpha_1 d}) :$$

Թիկունքային p^+ տիրույթում դիֆուզիոն հոսանքը հաշվի առնելիս կավելանա լրացուցիչ բաղադրիչ, և ճառագայթի ինտեգրալ հոսքի բոլոր ալիքների ստեղծած գումարային ֆոտոհոսանքը կորոշվի (1) արտահայտությամբ, իսկ մեկ ալիքի ստեղծած ֆոտոհոսանքը կլինի՝

$$I_{Ph\ i,j} = S qF(\lambda_i) \left(1 - 2e^{\alpha_i x_{mj}} + \frac{e^{-\alpha_i d}}{1 + \alpha_i w} \right) : \quad (3)$$

Եթե x_m խորությունը համապատասխանում է ճառագայթի ինտեգրալ հոսքից առավել ներթափանցող ալիքին, ապա լարման շատ փոքր փոփոխությունը կհամապատասխանի (2) արտահայտությամբ տրվող x_m -ի այնպիսի փոփոխության, որի սահմաններում կկլանվի միայն այդ ալիքը: Ունենալով փոփոխվող հոսանքի և x_m -ի արժեքները՝ կարելի է որոշել ալիքի կլանման α գործակիցը հետևյալ արտահայտությամբ [18]՝

$$\alpha_i = \frac{1}{\Delta x} \ln \frac{I_2}{I_1},$$


որտեղ $\Delta x = x_{m1} - x_{m2}$:

Այնուհետև (3) արտահայտությամբ կարելի է որոշել ֆոտոդետեկտորի լուսազգայուն մակերեսին ընկնող տվյալ ալիքի ինտենսիվությունը՝


$$F_{0i} = \frac{I_i}{q S \left(1 - 2e^{-\alpha_i x_{mj}} + \frac{e^{-\alpha_i d}}{1 + \alpha_i w} \right)},$$

և փոփոխվող լարման, և x_m -ի համար այդ ալիքի ստեղծած ֆոտոհոսանքը: Վերջինս, հանելով յուրաքանչյուր լարման համար փորձով ստացված գումարային ֆոտոհոսանքից, կունենանք նոր ֆոտոհոսանքների շարք, առանց որոշված ալիքի ներդրած ֆոտոհոսանքի: Այժմ լարման նոր, շատ փոքր փոփոխությունը իր չափով x_m -ը կտեղափոխի դեպի մակերևույթ և գրանցման միջավայր կներառի ըստ ներթափանցման խորության հաջորդ ալիքը: Դա թույլ կտա որոշել հաջորդ ալիքի ինտենսիվությունն ու երկարությունը: Այս կերպ քայլերը հաջորդաբար կրկնելով՝ կարելի է ստանալ ճառագայթի ինտենսիվության սպեկտրային կախվածությունը:

Նկ. 2-ում պատկերված կառուցվածքի փորձնական ՎԱԲ-ի տվյալները հաշվի առնելով՝ վերը նկարագրած ալգորիթմով ստացվել է քսենոնային լամպի ճառագայթի ինտենսիվության սպեկտրային բաշխվածությունը, որը բերված է նկ. 3-ում: Այն որոշակի մոտավորությամբ համապատասխանում է աղ. 1-ում բերված տվյալներով կառուցված նկ. 4-ի նույնանուն կախվածությանը:



Նկ. 3. Քսենոնային լամպի ճառագայթի ինտենսիվության սպեկտրային բաշխվածությունը



Նկ. 4. «Thorlabs PM100» մակնիշի չափիչ սարքով չափված քսենոնային լամպի ճառագայթի ինտենսիվության սպեկտրային բաշխվածությունը

Նկ. 3 –ում առկա մաքսիմումները, որոնք բացակայում են նկ. 4-ում, հետևանք են ալիքի երկարության առավել փոքր քայլերով փոփոխության և ավելի մոտ են քսենոնային լամպի անձնագրային տվյալներին [19]: Հետագայում աղմուկների նվազեցումը, կառուցվածքի կատարելագործումը կհանգեցնեն ճշտության բարձրացմանը:

Եզրակացություն.

1. Հետազոտվել են փորձնական նմուշներ, և ցույց է տրվել, որ դրանց բազայում առկա պոտենցիալ արգելքների՝ արտաքին լարմամբ մեկը մյուսի հաշվին փոփոխության շնորհիվ կարելի է հասնել սպեկտրային ընտրողական զգայնության:

2. Մշակված ալգորիթմի կիրառմամբ ստացվել է քսենոնային լամպի ինտենսիվության սպեկտրային բաշխվածությունը, որը որոշակի մոտավորությամբ կրկնում է էտալոնային բաշխվածությունը:

3. Բարձր ճշտության կարելի է հասնել՝ ունենալով կառուցվածք, որում արգելքների հպման կետը կհամընկնի ճառագայթի ամենախոր ներթափանցող ալիքի ներթափանցման խորությանը:

Հեղինակները շնորհակալություն են հայտնում “RD ALFA Microelectronics” ընկերությանը ֆոտոդետեկտորների նմուշների պատրաստմանը աջակցելու համար:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. **Peng J., Hongbo X., Zhiye He and Zheming W.** Design of a Water Environment Monitoring System Based on Wireless Sensor Networks // *Sensors*.-2009.-9.-P. 6411-6434.
2. **Normatov P.I., Armstrong R., Normatov I.Sh., Narzullov N.** Monitoring extreme water factors and studying the anthropogenic load of industrial objects on water quality in the Zeravshan River basin // *Russian Meteorology and Hydrology*.-2015.-40.-P. 347-354.
3. <http://augsignals.com/products-services/water-quality-monitoring/>
4. **Pshinko G.N., Kobets S.A., Puzyrnayain L.N.** Concentration of U(VI) on a complexing sorbent for its determination by the spectrophotometric method // *Journal of Water Chemistry and Technology*.-2013.- 35.-P. 145-151.
5. https://people.phys.ethz.chandrealu/ASSP10_Presentations/Optical%20Spectroscopy%20Techniques%20-%20Runar%20Sandnes.pdf
6. <http://www.dissercat.com/content/razrabotka-i-primenenie-distantionnykh-spektrometricheskikh-metodov-issledovaniya-prirodnkh>
7. Patent US 20130285187 A1. Photo cell devices and methods for spectrometric applications / **Th. Kautzsch**.- 2013.
8. Patent US 8916873 B2. Photodetector with controllable Spectral response / **Th. Kautzsch**.- 2014.
9. Patent DE 102013207801 A1. Photo cell devices and methods for spectroscopic applications / **Th. Kautzsch**.- 2012.
10. Patent US 8916873 B2. Photodetector with controllable spectral response/ **Ch. Jan, P. Daniel, S.T. Man, N. Univ.** - 2005.
11. **Nataša G., Novel A.** Type of Tri-Colour Light-Emitting-Diode-Based Spectrometric Detector for Low-Budget Flow-Injection Analysis // *Sensors*.-2007.- 7.-P. 166-184.
12. Improved selectivity from a wavelength addressable device for wireless stimulation of neural tissue.doi: 10.3389/fneng.2014.00005 / **Ç.S. Elif, S.F. David, G. Mutlu, et al** // *Front Neuroeng*.- 2014.- P. 1-12.
13. **Nader M.K. and Fereydoon N.** Filterless Si-Based Ultraviolet-Selective Photodetectors. Spire Corp. for Stennis Space Center.- Mississippi, Refer to SSC-00072.- 2004.
14. **Vanyushin I.V., Gergel V.A., Zimoglyad V.A., Tishin Yu.I.** Adjusting the Spectral Response of Silicon Photodiodes by Additional Dopant Implantation // *Russian Microelectronics*.-2005.-34.-P. 155–159.
15. Boron Distribution Profiling in Asymmetrical n⁺-p Silicon Photodiodes and New Creation Concept of Selectively Sensitive Photoelements for Megapixel Color Photoreceivers / **V.A. Gergel, A.V. Lependin, Y.I. Tishin**, et al // *Proc. SPIE*.- 2006.-6260.
16. **Khudaverdyan S.Kh., Dokholyan J.G., Khudaverdyan A.S., Grigoryan K.H.** Spectrophotometric filterless photo-detector // *Journal of Physics D: Applied Physics*.- 2007.-24.-P. 7669-7674.

17. **Sze S.** Physics of semiconductor devices.- 2nd edn. - Wiley-Interscience, New York, 1981.- 450 p.
18. New Model of Spectral Analysis of Integral Flux of Radiation / **S.Kh. Khudaverdyan, M.G. Khachatryan, D.S. Khudaverdyan, et al** // NATO Science for Peace and Security Series B: Physics and Biophysics, Springer 2013.-2013.- Series B: Physics and Biophysics.-P. 261-269.
19. https://en.wikipedia.org/wiki/Xenon_arc_lamp

Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան: Նյութը ներկայացվել է խմբագրություն 24.09.2016:

С.Х. ХУДАВЕРДЯН, М.Г. ХАЧАТРЯН, Т.С. ОГАНЕСЯН, Н.Б. МЕГРАБЯН

КРЕМНИЕВАЯ СТРУКТУРА С ДВОЙНЫМ БАРЬЕРОМ И СПЕКТРОФОТОМЕТРИЧЕСКИМИ СПОСОБНОСТЯМИ

Исследованы возможности спектральной селективной чувствительности вертикально расположенной двухбарьерной кремниевой $TiSi_2 - n - Si - p - Si$ структуры. На основе изученной структуры изготовлен образец и проведено моделирование проходящих в нем электронных процессов. Используя цифровые данные световой вольт-амперной характеристики, получено спектральное распределение интенсивности ксеноновой лампы. Очень маленькие (несколько nA) темновые токи позволяют проводить спектральный анализ электромагнитного излучения малой интенсивностью.

Ключевые слова: спектральное распределение, интенсивность луча, оптическая среда, моделирование.

S.KH. KHUDAVERDYAN, M.G. KHACHATRYAN, T.S. HOVHANNISYAN, N.B. MEHRABYAN

A DOUBLE-BARRIER SILICON STRUCTURE WITH SPECTROPHOTOMETRIC ABILITIES

The possibilities of the spectral selective sensitivity of a double barrier silicon $TiSi_2 - n - Si - p - Si$ structure placed vertically are investigated. A sample was produced based on the researched structure, and simulation of the electronic processes going on in it is carried out. Using the digital data of the light volt-ampere characteristics, the spectral distribution of the xenon lamp intensities is obtained. Very small (several nA) dark currents allow to carry out the spectral analysis of low-intensity electromagnetic radiation.

Keywords: spectral distribution, ray intensity, optical environment, simulation.

А.Г. АРУТЮНЯН, Л.Л. МХИТАРЯН

РАЗМЕЩЕНИЕ ЭЛЕМЕНТОВ КОМБИНАЦИОННЫХ СХЕМ С УЧЕТОМ ВАЖНОСТИ ЦЕПЕЙ

Предложен метод начального размещения логических ячеек комбинационных схем, основанный на предварительной оценке временных характеристик цепей и резервов времени задержки каждой цепи. Резервы времени цепей комбинационных схем в дальнейшем используются в качестве меры важности цепей, на основе чего производится размещение элементов схемы.

Ключевые слова: размещение элементов интегральных схем, комбинационная схема, задержка сигнала, резерв времени, критический путь.

Введение. В последовательных цифровых схемах обобщенный тракт обработки информации при его синхронной организации представляется совокупностью комбинационных схем (КС) и элементов памяти (триггеров, регистров). При этом выходы элементов памяти являются источниками информации для КС. В тракте обработки данных КС имеются маршруты распространения сигналов от первичных входов к конечным выходам, составленные из разного количества последовательно включенных логических элементов и цепей связи между ними. При этом задержки сигналов в КС оказывают существенное влияние на период следования тактовых синхроимпульсов, минимальное значение которого ($T_{\min}$) определяется как время распространения сигналов по самому длинному (критическому) пути в КС $t_{k \max}$ плюс длительность синхроимпульса t_u [1]:

$$T_{\min} = t_{k \max} + t_u. \quad (1)$$

В свою очередь, время распространения сигналов по критическому пути $t_{k \max}$ можно представить следующим образом:

$$t_{k \max} = \sum_{i=1}^n t_{3.p.\varepsilon.i} + \sum_{j=1}^m t_{3.p.\varphi.j}, \quad (2)$$

где $t_{3.p.\varepsilon.i}$ - задержка распространения сигнала i -го логического элемента критического пути; $t_{3.p.\varphi.j}$ - задержка распространения сигнала j -й цепи критического

пути; n и m – соответственно количество логических элементов и цепей критического пути.




Рис. 1. Эволюция задержек вентиля и межсоединений

Таким образом, как следует из выражений (1) и (2), для повышения быстродействия схемы необходимо уменьшить величину $T_{\min}$. Последнее достигается за счет:

- уменьшения задержки распространения сигнала в логических элементах критического пути $t_{з.р.э}$;
- уменьшения задержки переключения триггера и связанной с ней длительности импульса синхронизации t_u ;
- уменьшения задержки распространения сигнала в цепях критического пути $t_{з.р.ц}$.

Состояние вопроса. На этапе физического проектирования интегральных схем (ИС), когда определены элементная база и тип памяти, основным способом повышения быстродействия может служить уменьшение задержки распространения сигнала в цепях критического пути.

Переход к субмикронным технологиям часто приводит к качественным изменениям влияния различных физических явлений на работу ИС. В частности, если задержки сигнала в вентилях ранее значительно превышали задержки в межсоединениях, то в настоящее время обстоятельство резко изменилось. Например, при технологии 32 нм задержка наиболее применяемых алюминиевых межсое-

динений длиной в 1 мм почти в 200 раз превышает задержку одного вентиля, а для ИС в целом 80...90% задержек приходится на межсоединения (рис.1).

Если иметь в виду, что в среднем линейный размер одной стандартной библиотечной логической ячейки технологии 32 нм составляет порядка 5 мкм, то получается, что задержка в межсоединении между двумя соседними ячейками примерно равна задержке одной ячейки. Следовательно, быстродействие современных цифровых ИС во многом зависит от временных задержек сигнала в межсоединениях. Эти задержки определяются RC-параметрами линий связи, которые, в свою очередь, при определенной технологии в основном зависят от их длин. В первом приближении задержка распространения сигнала в межсоединениях прямо пропорциональна RC-параметрам данной линии связи $T \sim RC$. Как известно, паразитные параметры R и C определяются следующими формулами:

$$R = R_S \frac{\ell}{d} \text{ и } C = \frac{\varepsilon \ell d}{t}, \text{ где } R_S \text{ и } \varepsilon - \text{соответственно удельное поверхностное сопротивление линии связи и диэлектрическая проницаемость двуокиси кремния; } d, \ell \text{ и } t - \text{соответственно ширина и длина линии связи, толщина двуокиси кремния.}$$

При определенной технологии приведенные параметры, кроме длины ℓ , практически не зависят от топологии. Следовательно, можно принять, что задержка распространения сигнала в межсоединении прямо пропорциональна квадрату его длины $T \sim \ell^2$.

Из сказанного можно сделать важный вывод: при размещении ячеек, с целью уменьшения задержки распространения сигнала в цепях критического пути, следует добиться сокращения длин межсоединений, лежащих на критических путях. Это заключение лежит в основе задачи временем направленного размещения ячеек цифровых ИС.

Современные коммерческие системы автоматизированного проектирования (САПР) ИС, как правило, решают задачу размещения в два этапа: начальное размещение, основанное на приближенных быстрых алгоритмах, обеспечивающих хорошие условия для последующего окончательного размещения, и окончательное размещение, основанное на итерационных алгоритмах улучшения результатов начального размещения по тому или иному параметру [2,3]. В то же время следует отметить, что применение итерационных алгоритмов при отсутствии хорошего начального размещения приводит к неоправданно большим затратам компьютерного времени, а в ряде случаев вообще не обеспечивает получения желаемого качества решения.

В алгоритмах начального размещения в качестве критерия размещения используется условие обеспечения минимума ожидаемой суммарной виртуальной

длины межсоединений, согласно которому ожидаемые длины межсоединений между элементами идентифицируются их топологическими расстояниями [3]:

$$f_{\text{св}} = \sum_{i=1}^N \sum_{\substack{j=1 \\ j>i}}^N r_{ij} d_{ij} \rightarrow \min, \quad (3)$$

где r_{ij} – количество связей между i -ым и j -ым элементами; d_{ij} – геометрическое расстояние между i -ым и j -ым элементами; N – количество размещаемых элементов ИС.

Удовлетворение проектных требований по быстродействию, как правило, осуществляется на втором этапе размещения.

Существующие алгоритмы размещения, учитывающие задержки в межсоединениях, могут быть сгруппированы в два класса: основанный на пути и основанный на цепи.

Подход, основанный на пути, непосредственно воздействует на все или подмножество путей “вход-выход” схемы. Так как каждая логическая ячейка подключается к двум или более ячейкам, то управление длинами межсоединений критических путей затрагивает множество других цепей, в результате чего из-за увеличения длин цепей, которые подключены через лежащие на критических путях общие ячейки, может наблюдаться увеличение суммарной длины межсоединений ИС. При этом уменьшение задержки на критических путях может привести к появлению новых критических путей. В настоящее время эта проблема решается путем применения итерационных алгоритмов улучшения размещения с пошаговым уменьшением длин межсоединений критических путей до достижения приемлемых значений задержек.

Основным недостатком метода, основанного на пути, является потребность в больших машинных ресурсах при их реализации. Эти методы применяются на этапе оптимизации размещения, а их эффективность во многом зависит от результатов предварительного начального размещения.

Подход, основанный на цепи, имеет дело с отдельными цепями схемы. При этом, сокращая длины лежащих на критических путях отдельных цепей, можно добиться сокращения суммарных задержек путей. Этот подход более удобен для его применения на этапе начального размещения.

В существующих коммерческих САПР задача учета быстродействия, обусловленная задержками на межсоединениях, решается путем оценки критических путей “вход-выход” проектируемой схемы с дальнейшей минимизацией задержек в этих путях. При этом, как правило, используются итерационные алго-

ритмы размещения, которые предусматривают многократное изменение начального размещения, нацеленное на сокращение задержек критических путей.

Описание метода. Если учесть, что от результатов начального размещения во многом зависят количество итераций на втором этапе и, следовательно, время решения задачи, то становится очевидной важность разработки методов начального размещения элементов ИС, которые совместно с электрической связанностью элементов будут учитывать также быстродействие схемы. С учетом вышесказанного далее рассмотрены вопросы разработки критерия учета задержек цепей, удобного для применения в алгоритмах начального размещения.

С этой целью введем понятие важности цепей с точки зрения обеспечения быстродействия схемы. Определение важности цепей предполагает предварительную оценку реального и требуемого поздних времен формирования сигнала и резервов времени всех цепей схемы. При дальнейшем размещении логических ячеек полученные резервы времени служат мерой важности цепей.

Под реальным поздним временем формирования сигнала для некоторой цепи будем понимать минимальное время, необходимое для формирования правильного сигнала в данной цепи, начиная с момента появления сигнала на основных входах схемы. Это время для некоторой i -й цепи определяется следующим образом:

$$T_{pi} = \begin{cases} T_{0k} & - \text{для } k \in I, \\ \max_{j \in E_1(j,i)} [T_{pj} + t_{(j,i)}] & - \text{для остальных цепей,} \end{cases} \quad (4)$$

где T_{0k} - момент появления сигнала на k -ом основном входе схемы; I - множество основных входов схемы; T_{pj} - реальное позднее время формирования сигнала j -й цепи; $t_{(j,i)}$ - задержка ячейки, для которой j -я цепь является входной, а i -я - выходной; $E_1(j,i)$ - множество входных цепей ячейки, для которой j -я цепь является входной, а i -я - выходной.

Под требуемым поздним временем формирования сигнала для некоторой цепи будем понимать ту максимальную суммарную задержку от основных входов схемы до данной цепи, которая еще не приводит к опозданию сигнала на основных выходах схемы. Для некоторой i -й цепи она определяется следующим образом:

$$T_{mi} = \begin{cases} \max_{i \in O} T_{mi} & - \text{для } i \in O, \\ \min_{j \in E_2(i,j)} [T_{mj} - t_{(i,j)}] & - \text{для остальных цепей,} \end{cases} \quad (5)$$

где O - множество основных выходов схемы; T_{mj} - требуемое позднее время формирования сигнала j -й цепи; $t_{n(j,i)}$ - задержка ячейки, для которой i -я цепь является входной, а j -я - выходной; $E_{2(j,i)}$ - множество входных цепей тех ячеек, для которых i -я цепь является входной.

Под резервом времени i -й цепи будем понимать разность требуемого (T_{mi}) и реального (T_{pi}) времен формирования сигнала в данной цепи:

$$R_i = (T_{mi} - T_{pi}). \quad (6)$$

Так как резерв времени некоторой цепи определяет допустимую задержку сигнала в данной цепи, то с целью управления длинами межсоединений при размещении резервы времени цепей можно использовать в качестве критерия близости элементов. С этой целью в критерий размещения (3) введем некоторый коэффициент важности цепей, связывающих пары элементов, который учитывает резервы времени этих цепей. Такой коэффициент определяется исходя из следующих соображений:

- длины межсоединений должны быть прямо пропорциональными к их резервам времени. С инженерной точки зрения, это означает, что элементы, связанные цепями с меньшими значениями резервов времени, должны размещаться по возможности поближе, и наоборот;
- близость любой пары размещаемых элементов должна быть обратно пропорциональной к их связанности, что следует из условия минимума критерия (3);
- так как резерв времени некоторой цепи определяет допустимую задержку сигнала в данной цепи, то коэффициент важности должен определяться исходя из соображений его обратной пропорциональности к резерву цепи.

Введем понятие среднего резерва времени для множества цепей, связывающих пару элементов. Если множество цепей, связывающих i -й и j -й элементы, обозначить через G_{ij} , а каждый из этих цепей имеет резерв времени R_k ($k \in G_{ij}$), то средний резерв времени множества цепей G_{ij} определится следующим образом:

$$\tilde{R}_k = \frac{1}{r_{ij}} \sum_{k \in G_{ij}} R_k . \quad (7)$$

Исходя из вышесказанного, а также имея в виду, что задержка распространения сигнала в межсоединении прямо пропорциональна квадрату его длины $T \sim \ell^2$, предлагается следующий вид коэффициента важности множества цепей, связывающих i -й и j -й элементы:

$$\lambda_{ij} = \frac{1}{1 + \sqrt{\tilde{R}_k}} \text{ для } k \in G_{ij} . \quad (8)$$

Тогда критерий размещения по минимуму суммарной длины связей (3) с учетом задержки сигнала в цепях примет вид

$$f_{cs} = \sum_{i=1}^N \sum_{\substack{j=1 \\ j > i}}^N \lambda_{ij} r_{ij} d_{ij} \rightarrow \min . \quad (9)$$

